

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Կառավարության եւ
Վրաստանի Կառավարության միջեւ հարկային օրենսդրության
խախտումների դեմ պայքարի ոլորտում համագործակցության եւ
տեղեկությունների փոխանակման մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը եւ Վրաստանի
Կառավարությունը, այսուհետեւ՝ Կողմեր,
դեկլարավելով իրենց պետությունների գործող օրենսդրությամբ եւ
միջազգային պարտավորություններով,

ելնելով հարկային հանցագործությունների եւ իրավախախտումների
բացահայտման, նախագրուշացման եւ խափանման հետ կապված
խնդիրների արդյունավետ լուծման գործում փոխադարձ
շահագրգռվածությունից,

կարելուք նշանակություն տալով այդ նպատակներով բոլոր իրավական
եւ այլ հնարավորությունների օգտագործմանը,
համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրի առարկան

1. Սույն Համաձայնագրի առարկան հանդիսանում է Կողմերի
իրավասու մարմինների տնօրինությանը վերաբերող հարկային
հանցագործությունների եւ իրավախախտումների բացահայտման,
նախագրուշացման եւ խափանման ուղղությամբ արդյունավետ պայքարի
կազմակերպման նպատակով Կողմերի իրավասու մարմինների
համագործակցությունը:

2. Սույն Համաձայնագիրը չի շոշափում քաղաքացիական եւ քրեական
գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային
պայմանագրերից բխող Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները:

Հոդված 2

Իրավասու մարմինները

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար Կողմերի իրավասու
մարմիններն են.

Հայաստանի Հանրապետության կողմից՝ Հայաստանի
Հանրապետության հարկային տեսչությունը,
Վրաստանի կողմից՝ Վրաստանի հարկային պետական ծառայությունը:
Պետքում Կողմերը անհապաղ ծանուցում են միմյանց այդ մասին:

2. Իրավասու մարմինների պաշտոնական անվանումը փոխվելու

Հոդված 3

Համագործակցության ձևերը

Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերը օգտագործում են համագործակցության հետևյալ ձևերը.

իրավաբանական եւ (կամ) ֆիզիկական անձանց կողմից կատարված հարկային հանցագործությունների ու իրավախախտումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում,

հարկային հանցագործությունների եւ իրավախախտումների բացահայտմանը, նախագոյնացմանը եւ խափանմանն ուղղված միջոցառումների անցկացման հարցերով փոխգործողություն,

իրավաբանական եւ ֆիզիկական անձանց հարկման հետ կապված վիստաբուրների համապատասխան ձեռով վավերացված պատճենների ներկայացում,

ազգային հարկային համակարգերի, հարկային օրենսդրության փոփոխությունների եւ լրացումների, ինչպես նաեւ հարկային հանցագործությունների եւ իրավախախտումների դեմ պայքարի կազմակերպման հարցերով մեքոդական հանձնարարականների մասին տեղեկությունների փոխանակում,

հարկային հանցագործությունների եւ իրավախախտումների դեմ պայքարում օգտագործվող տեղեկատվական համակարգերի ստեղծման եւ շահագործման հարցերով փորձի փոխանակում,

համագործակցության ընթացքում ծագող հարցերով անհրաժեշտ օգնության մատուցում եւ գործունեության կողողինացման իրականացում, ներառյալ՝ աշխատանքային խմբերի ստեղծում, ներկայացուցիչների փոխանակում եւ կադրերի ուսուցում, ինչպես նաեւ հարկային հանցագործությունների եւ իրավախախտումների դեմ պայքարի պրոբլեմների շուրջ գիտա-գործնական կոնֆերանսների եւ սեմինարների անցկացում:

Սույն Համաձայնագրի կատարման հետ կապված հարցերով Կողմերի իրավասու մարմինները հաղորդակցվում են անմիջականորեն:

Հոդված 4

Հարկային հանցագործությունների եւ իրավախախտումների մասին տեղեկությունների փոխանակումը

1. Հարկային հանցագործությունների եւ իրավախախտումների մասին տեղեկությունների փոխանակումը նախատեսում է հետևյալ տեղեկությունների տրամադրում.

իրավաբանական եւ (կամ) ֆիզիկական անձանց եկամուտները հարկումից թաքցնելու մասին, նշելով այն եղանակները, որ ընդամին կիրառում են հարկային օրենսդրությունը խախտողները,

իրավաբանական եւ (կամ) ֆիզիկական անձանց կողմից պետական եւ առետրային բանկերում հաշիվներ բացելու, ինչպես նաեւ այդ հաշիվներով

միջոցների շարժի մասին, եթե հիմքեր կան ենթադրելու, որ այդ հաշիվներում գտնվում են հարկումից քաքցվող գումարներ,

իրավաբանական եւ (կամ) ֆիզիկական անձանցից գանձվող հարկերի գումարների եւ հարկման բազայի չափերի, եկամուտների մասին, ինչպես նաեւ հարկային հանցագործությունների եւ իրավախախտումների բացահայտման, նախագծուշացման եւ խափանման նպատակով իրականացվող միջոցառումների մասին:

2. Սույն հոդվածի առաջին կետով նախատեսված տեղեկությունը մի Կողմի իրավասու մարմնի կողմից մյուս Կողմի իրավասու մարմնին արված հարցման հիման վրա ներկայացվում է այն պայմանով, որ տեղեկության տրամադրումը չի հակասում հարցվող կողմի պետության շահերին եւ օրենսդրությանը:

Եթե Կողմերից մեկի իրավասու մարմինը համարում է, որ իր առօրինության տակ գտնվող տեղեկությունը հետաքրքրություն է ներկայացնում մյուս Կողմի իրավասու մարմնի համար, ապա նա կարող է այդ տեղեկությունը ներկայացնել սեփական նախաձեռնությամբ:

Հոդված 5

Միջոցառումների անցկացումը

Կողմերի իրավասու մարմինների փոխգործողությունը հարկային հանցագործությունների եւ իրավախախտումների բացահայտման, նախագծուշացման եւ խափանման միջոցառումներ անցկացնելիս՝ նման հանցագործություններ եւ իրավախախտումներ կատարած կամ դրանց կատարման մեջ կասկածվող անձանց նկատմամբ, ներառում է համատեղ պլանավորում, ուժերի եւ միջոցների օգտագործում, տեղեկությունների փոխանակում այդ միջոցառումների ընթացքի եւ արդյունքների մասին:

Հոդված 6

Փաստաթղթերի պատճենների տրամադրումը

Կողմերի իրավասու մարմինները ըստ հարցման միմյանց ներկայացնում են իրավաբանական եւ ֆիզիկական անձանց հարկմանը վերաբերող փաստաթղթերի (հաշիվներ, ապրանքագրեր, բեռնագրեր, պայմանագրեր, կոնտրակտներ, սերտիֆիկատներ, տեղեկանքներ եւ այլն), ինչպես նաեւ հարկային հանցագործություններին եւ իրավախախտումներին առնչվող հարցերի վերաբերյալ փաստաթղթերի պատճեններ: Պատճենները վավերացվում են լիազոր անձի ստորագրությամբ եւ կնիքով՝ օրենքով սահմանված կարգով:

Հոդված 7 Իրավական բնույթի նյութերի փոխանակումը

Կողմերի իրավասու մարմինները կանոնավոր կերպով իրականացնում են տեղեկությունների փոխանակում ազգային հարկային համակարգերի, հարկային օրենսդրության ոլորտում հանցագործությունների հետաքննությունների անցկացման եւ վարչական իրավախախտումների գործերի վարույթի իրավական հիմքերի մասին, ժամանակին տեղեկացնում են միմյանց հարկային օրենսդրության փոփոխությունների, ընդունված նոր իրավական նորմատիվ ակտերի, ինչպես նաեւ գործող իրավական նորմատիվ ակտերում մտցվող փոփոխությունների մասին:

Հոդված 8 Համագործակցությունը տեղեկատվական ապահովման հարցերում

Կողմերի իրավասու մարմինները հարկային հանցագործությունների եւ իրավախախտումների դեմ պայքար կազմակերպելիս իրականացնում են տեղեկատվական համակարգերի ստեղծման եւ շահագործման հարցերով փորձի, մեթոդիկաների, ծրագրային ապահովման միջոցների եւ գիտական նյութերի փոխանակում:

Հոդված 9 Համագործակցությունը եւ փորձի փոխանակումը կադրերի պատրաստման ոլորտում

Կողմերի իրավասու մարմինները համագործակցում են իրենց ուսումնական հաստատությունների բազայի վրա կադրերի ուսուցման եւ վերապատրաստման, հարկային հանցագործությունների եւ իրավախախտումների դեմ պայքարի հրատապ հարցերով համատեղ գիտական հետազոտությունների, գիտա-գործնական կոնֆերանսների եւ սեմինարների անցկացման բնագավառում:

Սույն հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսվող համագործակցության կոնկրետ ձևերի եւ ֆինանսավորման հարցերը կկարգավորվեն Կողմերի իրավասու մարմինների միջև կնքվող առանձին համաձայնագրերով:

Հոդված 10 Հարցման ձևն ու բովանդակությունը

1. Տեղեկություն ստանալու հարցումը պետք է փոխանցվի գրավոր կամ հեռախոսային, ֆաքսիմիլային կամ համակարգչային կապի օգտագործման միջոցով:

Հետաձգում չհանդուրժող դեպքերում կարող է ընդունվել հեռախոսակապի միջոցով փոխանցվող բանավոր հարցում, սակայն այն պետք է անմիջապես գրավոր ձևով հաստատվի:

Հեռախոսային, ֆաքսիմիլային կամ համակարգչային կապն օգտագործելիս, ինչպես նաև բանավոր հարցման իսկության կամ բովանդակության առումով կասկածների առաջանալիս հարցվող իրավասու մարմինը կարող է պահանջել գրավոր հաստատում:

2. Տեղեկություն ստանալու հարցումը պետք է պարունակի.

հարցում կատարող իրավասու մարմնի անվանումը,

հարցվող իրավասու մարմնի անվանումը,

հարցման էության շարադրանքը եւ դրա հիմնավորումը, ինչպես նաև այն իրականացնելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Քրեական գործերով տեղեկություն ստանալու հարցման մեջ քվարկվածից բացի նշվում են.

փաստացի հանգամանքների նկարագրումը,

հանցագործության որակավորումը,

հասցված վնասի չափը:

Հոդված 11

Հարցման կատարումը

1. Հարցումը կատարման է ընդունվում անհապաղ: Հարցվող իրավասու մարմինը կարող է ճշգրտման կարգով լրացուցիչ տեղեկություն պահանջել, եթե դա անհրաժեշտ է հարցումը կատարելու համար:

2. Հարցումը կատարելու անհնարինության դեպքում հարցվող իրավասու մարմինը անհապաղ ծանուցում է այդ մասին հարցում անող իրավասու մարմնին:

Հարցման կատարումից հրաժարվում են, եթե դա կարող է վնաս հասցնել պետության ինքնիշխանությանը կամ անվտանգությանը կամ էլ հակասում է հարցվող իրավասու մարմնի պետության օրենսդրությանը:

Հարցումը կատարելուց հրաժարվելու պատճառների մասին ծանուցվում է հարցում անող իրավասու մարմնին:

Հոդված 12

Փոխգործողությունը հարցումը կատարելիս

Հարցվող իրավասու մարմինը հարցում անող իրավասու մարմնի լիազոր ներկայացուցիչներին կարող է բույլատրել իր պետության տարածքում մասնակցել հարցումը կատարելու գործին, ապահովելով նրանց աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններ, եթե դա չի հակասում իր պետության օրենսդրությանը:

Հոդված 13

Լեզուները

Տեղեկություն ստանալու հարցումը եւ դրա պատասխանը կազմվում են կողմերի իրավասու մարմինների միջև համաձայնեցված լեզվով:

Հոդված 14

Տեղեկության օգտագործումը

Սի Կողմի իրավասու մարմինը մյուս Կողմի իրավասու մարմնի խնդրանքով երաշխավորում է հարկային հանցագործությունների և իրավախախտումների բացահայտման, նախագործացման և խափանման հետ կապված հարցերի տեղեկության գաղտնիությունը:

Սույն Համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկությունը չի կարող փոխանցվել երրորդ կողմին առանց այդ տեղեկությունը տրամադրող իրավասու մարմնի գրավար համաձայնության:

Հոդված 15 Ծախսերը

Կողմերի իրավասու մարմինները կրում են իրենց պետության տարածքում սույն Համաձայնագրի կատարման հետ կապված ծախսերը: Լրացուցիչ ծախսեր պահանջող հարցումներ ստանալու դեպքում Կողմերի իրավասու մարմինները դրանց ֆինանսավորման հարցը քննարկում են փոխադարձ պայմանավորվածությամբ:

Կողմերի իրավասու մարմինները միմյանց կհատուցեն թարգմանիչների ծառայությունների ծախսերը, որոնք կարող են պահանջվել հարցումը կատարելիս, եթե այլ բան չի համաձայնեցված նրանց միջև:

Համաձայնեցված հանդիպումների ժամանակ, եթե չկա այլ գրավոր պայմանավորվածություն, ընդունող իրավասու մարմինը ապահովում է և վճարում է իր պետության տարածքում մյուս իրավասու մարմնի պատվիրակության ընդունման հետ կապված ծախսերը, իսկ ուղարկող իրավասու մարմինը կրում է ճանապարհածախսը:

Հոդված 16 Համաձայնագրի կատարման հետագա միջոցները

Կողմերի իրավասու մարմինների ներկայացուցիչները անհրաժեշտության դեպքում հանդիպում են անցկացնում սույն համաձայնագրի կատարման հետ կապված հարցերի քննարկման համար:

Հոդված 17 Համաձայնագրի ուժի մեջ մտնելն ու գործողությունը դադարեցնելը


Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում անհրաժեշտ ներպետական ընթացակարգի կատարման մասին կողմերի վերջին գրավոր ծանուցման օրվանից և դադարեցնում է իր գործողությունը այն օրվանից վեց ամիս լրանալուց հետո, երբ Կողմերից մեկը մյուս Կողմին գրավոր կհայտնի նրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

7

Կնքված է ք. Երևանում « 14 » հունվարի 1997 թ. երեք օրինակից, յուրաքանչյուրը հայերեն, վրացերեն և ռուսերեն լեզուներով, ընդ որում երեք տեքստերն էլ ունեն նույն իրավաբանական ուժը: Սույն Համաձայնագրի հայերեն և վրացերեն տեքստերի վերաբերյալ Կողմերի մոտ տարաձայնություններ առաջանալու դեպքում, նախապատվությունը կտրվի սույն Համաձայնագրի ռուսերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Կառավարության կողմից



ՎՐԱՍՏԱՆԻ

Կառավարության կողմից

